Հավելված N 7

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Երեխայի իրավունքների պաշտպանության 2020 թվականի տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարության 2019թ. սեպտեմբերի 30-ի N1292-L արձանագրային որոշման իրականացման վերաբերյալ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքները	Վերստուգելի չափանիշ	Գրանցված արդյունքներ	Այլ նշումներ
1.	Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ	Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 6 մանկատանը կխնամվի 649 երեխա	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) 5 հաստատությունում (մանկատուն) իրականացվում է առանց ծնողական խնամքի մնացած 577 երեխայի շուրջօրյա խնամքի, դաստիարակության ապահովումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Մանկատներից երեքը հատուկ է՝ մասնագիտացված, որտեղ խնամվում է ծանր հաշմանդամություն ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական և	Հիմք ընդունելով երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ուղղված քաղաքականությունը՝ կանխարգելման ծրագրերի շրջանակում նվազել է հաստատություններում խնամք ստացող երեխաների թիվը:

				ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի մտավոր և ֆիզիկական խնդիրներով շուրջ 450 երեխա:	
2.	ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում)	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքում	Ծրագրի շրջանակում ընտանիք կվերադառնա 20 երեխա, կկանխարգելվի 369 երեխայի մուտքը հաստատություններ	2020 թվականի հունվարից պետության կողմից պատվիրակման միջոցով՝ 10 մարզերում և Երևան քաղաքում ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվում է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ», ներառյալ «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» ծրագիրը, որի շրջանակներում շահառու երեխաները և նրանց ընտանիքները ստանում են ծրագրի նպատակներից բխող ծառայություններ (մասնագիտական աջակցություն, սոցիալական աջակցություն՝ սննդի զամբյուղ և էլեկտրաէներգիայի փոխհատուցում, բնաիրային փաթեթ): Շուրջ 618 երեխա ընդգրկված են ծրագրում: Հատկանշական է, որ կանխարգելվել է	Ծառայություն ստացած երեխաների թիվն ավելացել է՝ արտակարգ դրությամբ պայմանավորված ավելի մեծ թվով երեխաների աջակցելու անհրաժեշտությունից ելնելով:

				հաշմանդամություն և առողջական խնդիրներ ունեցող 34 երեխայի մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ: Ոլորտի քաղաքականությանը համաձայն՝ համակողմանի աշխատանքների արդյունքում շուրջ 22 երեխաներ վերադարձել են կենսաբանական ընտանիքներ:	
3.	Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների 18-23 տարեկան շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն	Ապահովված է շրջանավարտների իրավունքների և շահերի պաշտպանությունը	Ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի 4 շահառուի	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկատան շրջանավարտները հնարավորություն են ունեցել բնակարանի գնման վկայագրի ձեռքբերման՝ վերջիններս նախընտրել են օգտվել իրենց տվյալ իրավունքից՝ հետևաբար անհրաժեշտություն չի առաջացել բնակարանի վարձակալության:	
4.	Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքը կենսաբանական	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 3277 երեխայի կտրամադրվեն ցերեկային խնամքի	2020 թվականից նախարարությունն ընդլայնել է ցերեկային ծառայությունների ծածկույթը՝ հանրապետության 20 խոշոր բնակավայրերում ծառայություններ պատվիրակելով հասարակական կազմակերպություններին: 2020 թվականի ընթացքում պատվիրակված հասարակական կազմակերպությունների կողմից նշված	

		ընտանիքներում	ծառայություններ և նրանց ընտանիքներին՝ սոցիալ-հոգեբանական ծառայություններ	ծառայությունը միջինում տրամադրվել է 2700 երեխայի: Պայմանավորված ՔՈՎԻԴ 19 համավարակով՝ ծառայությունները արտակարգ դրության ժամանակահատվածում տրամադրվել են հեռավար եղանակով: Ծառայությունն ունի նաև շարժական բաղադրիչ՝ ուղղված սպասարկելու այն համայնքների երեխաներին, որտեղ ծառայությունը տեղակայված չէ, սակայն աջակցության կարիք կա:	
5.	Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը	Նախարարության համակարգի երեխաների խնամքի գիշերօթիկ մեկ հաստատությունում կխնամվի 90 երեխա	ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի N 1507-Ն որոշման համաձայն՝ 2020 թվականի հունիս ամսվա դրությամբ լուծարման ենթակա էր «Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը, սակայն պայմանավորված խնամք ստացող երեխաների խնամքի ընդհատման ռիսկի կանխարգելումով և ծառայությունների շարունակականության ապահովման անհրաժեշտությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ստեղծման ենթակա ընտանիքի աջակցության կենտրոնի տեղակայումը ենթադրվում է հիմնել մեկ շենքում՝ նպատակահարմարություն է	

				առաջացել լուծարման գործընթացի փոխարեն իրականացնել «Գյումրու քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ին միաձուլման միջոցով նոր հաստատության ստեղծում (Որոշումն ընդունվել է սույն թվականի նոյեմբերի 26-ին): Նշված հաստատությունում ներկայում խնամք է ստանում 26 երեխա:	
6.	Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց և երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ	Ապահոված է թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնումը	Թրաֆիքինգի /շահագործման/ ենթարկված մինչև 32 անձի, այդ թվում երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների տրամադրում	Նախարարության ենթակայությամբ գործող ցերեկային աջակցություն տրամադրող կենտրոններում նշված պատճառով ամսական միջինում 25 երեխայի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ:	
7.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 17 երեխայի կտրամադրվի մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք	«Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը ցերեկային խնամքի բաղադրիչից զատ ունի նաև շուրջօրյա բաղադրիչ, որի շնորհիվ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան 22 երեխայի տրամադրվել է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք, կարիքահենք ծառայություն՝ նպատակ հետապնդելով	

				խոչընդոտների վերացման արդյունքում՝ կանխել երեխայի և ընտանիքի երկարաժամկետ բաժանումը: Ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայությունների ընդլայնման նպատակով շրջանառության մեջ են դրվել Գյումրի և Կապան քաղաքներում երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների ստեղծմանն ուղղված իրավական ակտերի համապատասխան նախագծեր: 2020 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ կառավարության N 1878 - Ն որոշմամբ հաստատվել է «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» և «Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու և «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, գույք հետ վերցնելու և ամրացնելու, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի N 1507-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության	

				որոշման նախագիծը:	
8.	Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված և հաշմանդամություն ունեցող երեխայի և նրա ընտանիքի սոցիալ-հոգեբանական վերականգնումը, երեխայի ներառումը հասարակությանը	Երեխայի և ընտանիքի աջակցության 6 կենտրոնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 600 երեխայի և նրանց ընտանիքներին կտրամադրվեն սոցիալ-հոգեբանական ծառայություններ	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ցերեկային խնամքի ծառայություն տրամադրող 6 պետական հաստատությունների կողմից ծառայություն է մատուցվում 2-18 տարեկան շուրջ 600 երեխայի: Կենտրոնները ծառայություն են տրամադրում ոչ միայն երեխաներին, այլ նաև ընտանիքներին՝ ապահովելով սոցիալ-հոգեբանական օգնության, իրավական խորհրդատվության, ուսումնադաստիարակչական ծառայությունների, մասնագիտական կողմնորոշման, արվեստի միջոցով թերապիայի, օկուպացիոն թերապիայի (վերականգնողական վարժանքներով թերապիա) տրամադրումը, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, ժամանցի, ինչպես նաև սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպումը: Նշված բոլոր ծառայությունների նպատակն է երեխային և նրա ընտանիքին աջակցելը՝ ապահովելով երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը: Քովիդ 19-ի պայմաններում, երբ	

				նշված հաստատությունները ծառայությունները տրամադրել են հեռավար եղանակով՝ բոլոր շահառու երեխաների ընտանիքներին երկշաբաթյա կտրվածքով տրամադրվել է սննդի զամբյուղ:	
9.	Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում	Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կյանքի հմտությունների ձեռքբերումը և ներառումը հասարակությանը	Մանկատներում խնամվող դպրոցահասակ՝ 7-18 տարեկան 86 երեխայի կտրամադրվի մանր ծախսերի համար նախատեսված գումար /գրպանի ծախս/	Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող պետական հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին գրպանի ծախսերի համար, որպես դրամական աջակցություն, պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում յուրաքանչյուր ամիս տրամադրվել է մանր ծախսերի համար նախատեսված գումար (գրպանի գումար) 75 երեխայի:	
10.	Կենսաբանական ընտանիքներ տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրում	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված Երեխայի խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքում	389 երեխայի կենսաբանական ընտանիքների կտրամադրվի բնաիրային օգնության փաթեթ	Միջոցառումն իրականացվել է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ» միջոցառման հետ համատեղ՝ ընդգրկելով	

				տվյալ միջոցառման բոլոր շահառուներին (կետ 2):	
11.	Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների ն միանվագ դրամական օգնության տրամադրում	Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի ներառումը հասարակությանը	Մանկատների 4 շրջանավարտի տրամադրվի միանվագ դրամական օգնություն	Մանկատների 4 շրջանավարտի տրամադրվել է միանվագ դրամական օգնություն	
12.	Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակությա ն աջակցության տրամադրում	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված և հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքն ու դաստիարակությունը ընտանիքում	Խնամատար ընտանիքներում խնամք կտրամադրվի առանց ծնողական խնամքի մնացած 94 երեխայի	Խնամատար ընտանիքում խնամք և դաստիարակություն է ստանում 78 երեխա, 58 ընտանիքում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականին վերապատրաստվել են խնամատար ծնող դառնալ ցանկացող ևս 11 քաղաքացի: ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի հետ կնքվել է հուշագիր՝ խնամատարության ինստիտուտի զարգացման նպատակով:	Դեկտեմբերին իրականացվել է խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց 4-րդ դասընթացը, որի շրջանակներում վերապատրաստվել են ևս 10 խնամատար ծնող դառնալ ցանկացող անձինք: Հոգեզավակների թիվը փոփոխվել է

				Ձեռնարկվել են այլընտրանքային խնամքի նշված եղանակի բարեփոխմանն ուղղված մեծածավալ աշխատանքներ:	տարվա ընթացքում՝ կապված 18 տարին լրանալու պատճառով խնամատարության դադարեցման, ճգնաժամային խնամատարության ավարտի հետ: Այնուամենայնիվ, համագործակցության շրջանակներում ներդրվում են ջանքեր՝ մասնագիտացված խնամատարության զարգացման նպատակով, քանի որ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձինք հիմնականում նախընտրում են իրականացնել ընդհանուր երկարաժամկետ խնամատարություն:
13.	Մարդկանց թրաֆիքինգի և/կամ	թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց և	Թրաֆիքինգի /երեխաների/ շահագործման/	Ֆինանսական (250 հազար) աջակցություն է տրամադրվել թրաֆիքինգի և շահագործման ենթարկված մեկ զոհի:	

	շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում	երեխաների սոցիալիոգեբանական վերականգնումը	զոհերին կտրամադրիվի դրամական փոխհատուցում		
14.	Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի տարբեր կառույցների կադրերի մասնագիտական պատրաստման և վերապատրաստման իրականացում	Իրականացվելու է երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի տարբեր կառույցների կադրերի մասնագիտական ուսուցում և վերապատրաստում	Վերապա-տրաստված մասնագետներ	ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորված Measure Evaluation ծրագրի հետ համագործակցության արդյունքում վերապատրաստվել են խնամակալության և հոգաբարձության մարմնի անդամներ, բոլոր մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետները, երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք իրականացնող հաստատությունների մասնագետները: Վերապատրաստումներն իրականացվել են՝ մոնիթորինգ, գնահատում և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգում տեղեկության հավաքագրում և վերլուծություն ուղղություններով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Մասնագիտական կողմնորոշման և կարիերիայի ուղղորդման կենտրոնի կողմից վերապատրաստվել են երեխաների շուրջօրյա խնամք և	

				պաշտպանություն իրականացնող հաստատությունների 17 մասնագետներ՝ նոր գործիքակազմի ներդրման միջոցով մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ մասնագիտացված աշխատանքների իրականացման նպատակով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականին 23 մասնագետ վերապատրաստվել է իրավահավասարության, խտրականության արգելքի դեմ թեմաներով, իսկ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ 24 մասնագետ: Մինչև տարեվերջ կիրականացվի ավելի քան 70 մասնագետի վերապատրաստումներ (խնամատարություն, երեխաների իրավունքների պաշտպանության թեմաներով):	
15.	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովն	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերապատրաստված անդամներ,	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների և համայնքների	ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորված Measure Evaluation ծրագրի շրջանակներում իրականացվել է խնամակալության և հոգաբարձության մարմինների ներկայացուցիչների վերապատրաստում՝	

	երի անդամների, համայնքներում երեխաներին սոցիալական ծառայություններ տրամադրող մասնագետների, այդ թվում՝ դեպք վարողների ուսուցումների իրականացում	համայնքներում երեխաներին սոցիալական ծառայություններ տրամադրող վերապատրաստված մասնագետներ	համապատասխան ոլորտի աշխատակիցների 50 տոկոսի վերապատրաստում	տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և մոնիթորինգի թեմաներով: 14-րդ կետում նշված վերապատրաստումներում ևս ընդգրկված են խնամակալության և հագաբարձության մարմինները: Երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի հստակեցումից հետո՝ կիրականացվի նաև խնամակալության մարմիններին վերապահված գործառույթների շրջանակներում վերապատրաստման դասընթացներ:	
16.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված /ԿԴԻՀ/ երեխաների տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա ՀՀ մարզպետարանների կողմից շուրջօրյա հաստատություն	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թվի նվազում	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ուղղված կանխարգելման ծրագրեր	Կանխարգելման ծրագրերը պետության կողմից պատվիրակված կազմակերպությունների կողմից իրականացնելիս սերտ համագործակցել են մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ, իսկ տեղեկատվական համակարգում ձևավորվել է առանձին բաղադրիչ՝ նշված կազմակերպությունների կողմից ցերեկային խնամքի ծառայություններ ստացող երեխաների տվյալների առանձնացման նպատակով: Միաժամանակ ձեռնարկվել են միջոցներ՝ համակարգում մնացյալ ծառայություններից օգտվողների վերաբերյալ	

	ներ երեխաների մուտքի կանխարգելման ծրագրերի մշակում և իրականացում			տեղեկատվության մուտքագրման հնարավորություն ստեղծելու համար:	
17.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տեղեկատվական համակարգի արդիականացում	Կենտրոնացված հաշվառման վերաբերյալ մշակված և ներդրված տեխնիկական նկարագրեր	Կենտրոնացված հաշվառման վերաբերյալ մշակված և ներդրված տեխնիկական նկարագրեր	ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորված Measure Evaluation ծրագրի հետ համագործակցության արդյունքում իրականացվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգի արդիականացում: Մշակվել են համակարգի միջոցով ոլորտի մշտադիտարկման նոր ցուցանիշներ: Համակարգում ներդրվել են տեղեկության հավաքագրման և վերլուծության նոր եղանակներ, որոնք մի շարք հնարավորությունների հետ մեկտեղ թույլ կտան ապահովել տրամադրվող ծառայությունների առավել հասցեականությունը: Ներկայում ընթանում է տեխնիկական լուծումների ապահովմանն ուղղված աշխատանքները, որի արդյունքում համակարգում կձևավորվի ներդրված մշտադիտարկման ցուցանիշներին համապատասխան տեղեկություն: ԱՄՆ ՄԶԳ D4I ծրագրի շրջանակներում կնքվել	

				է համագործակցության հուշագիր, որով մեկնարկել է տեղեկատվական համակարգի արդիականացման մեծածավալ աշխատանքներ:	
18.	Հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու, հաստատություններից երեխաներին ընտանիքներ տեղափոխելու գործընթացը խթանելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների նախագծերի ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ	Երեխաների խնամքի և դաստիարակության իրականացում ընտանիքներում	Ընդունված իրավական ակտեր	ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի N 432-Լ որոշմամբ հաստատվել է Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը:	